«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» հասարակական կազմակերպություն
Երեւան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 580219, 563363, ֆաքս: (37410) 581102, E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

---

02.05.2022թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ
Պարոն Էդվարդ Հովհաննիսյանին

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի
«Հետք» թերթի լրագրող
Գրիշա Բալասանյանից
Հեռ. 093-82-26-80, e-mail: grisha.balasanyan@hetq.am

Հարգելի պարոն *Հովհաննիսյան,*

«Հետք» էլեկտրոնային թերթը դեռևս 06.04.2022թ-ին գրավոր հարցում էինք ուղարկել Ձեզ՝ խնդրելով տրամադրել 44-օրյա պատերազմի հետևանքով Արմավիրի մարզ բնակության տեղափոխված Արցախի Հանրապետության քաղաքացիների վերաբերյալ տեղեկություններ: Ստացվել է հարցման պատասխանը, սակայն, տվյալների մեջ կան էական անհամապատասխանություններ, ինչը հնարավոր չէ հրապարակել: Հաշվի առնելով այդ հանգամանքը, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6, 9 և 12-րդ հոդվածի հիմքով խնդրում եմ տրամադրել **ամբողջական և հավաստի** տեղեկություններ հետևյալի մասին.

1. 2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Արցախում սանձազերծած պատերազմի հետևանքով Արմավիրի մարզում քանի՞ արցախցի է ժամանակավոր բնակվում: Նրանցից քանի՞սն են անչափահաս: ***Տեղեկատվությունը տրամադրել ըստ համայնքների և բնակավայրերի:***

2. Արցախի ո՞ր համայնքներից են Արմավիրի մարզ տեղափոխվել արցախցիները: ***Տեղեկատվությունը տրամադրել ըստ Արցախի համայնքների, որտեղից եկել են՝ նշելով նաև այդ համայնքներից տեղահանվածների թիվը:***

3. Ի՞նչ բնակելի հատվածներում, կացարաններում կամ վայրերում են ապրում Արմավիրի մարզում գտնվող արցախցիները: **Տեղեկատվությունը տրամադրել ըստ համայնքների՝ նշելով բնակելի տարածքի տեսակը, յուրաքանչյուրում ապրողների թիվը (տուն, դպրոց, մանկապարտեզ եւ այլն):**

4. Կա՞ն արցախից ժամանակավոր տեղափոխվածներ, ովքեր ցանկություն են հայտնել մշտապես բնակվել մարզի տարածքում: Եթե այո, ապա այդ ուղղությամբ ի՞նչ քայլեր է ձեռնարկել մարզպետարանը, ի՞նչ ծրագրեր կան նման անձանց համար:

5. Արդյո՞ք իրականացվել է կարիքների գնահատում, թե մարզում ապրող արցախցիների համար որոնք են առաջնահերթությունները, ինչի կարիք ունեն եւ ինչ թիրախային աշխատանքներ պետք է իրականացվեն այդ ուղղությամբ: Եթե այո, ապա տրամադրել ուսումնասիրության արդյունքները:

Կանխավ շնորհակալություն

Դիմող՝ Գ. Բալասանյան